

նաւորացիս Վիեննայի մէջ: Աւստրիոյ կառավարութիւնը, որ կ'երազէր անկաշկանդ յառաջ մղելու իր «սրացքը դէպի Արեւելք» (Drang nach Osten) կը սարսափէր մեծ Սիբիրոյ մը ստեղծումէն, ուստի եւ փութաց մարելու 'հրդեհը, եւ իրեն վրայ առնելով նախաձեռնութիւնը, մէկ կողմէն հրաւիրեց միւս պետութիւններն եւս միջամտելու, միւս կողմէն յարեցրութեան մտաւ թիւրք կառավարութեան հետ եւ թելադրեց, որ ան ընդունէ աստատմանը դէմ քանի մը պահանջները — տեղական ժամտարմերիայի կազմակերպութիւն, քրիստոնեաներու հաւատարմութիւն խաւամներու հետ դատական ատեանի առջեւ եւայլն:

Բայց ահա Պոլսոյ կառավարութիւնը ի գործ դրաւ սովորական խարդախութիւններէն մէկը, որուն յաճախ էր դիմած իր ապանպալի վայրկեաններուն մէջ: Սուլթանը հրատարակեց իրատէ մը, որով կը ծանուցէր, թէ հրահանգած է ընդհանուր ուժօրմներու ծրագիր մը ամբողջ կայսրութեան համար...

Այդ յանդուգն խեղկատակութիւնը, որ նպատակ ունէր փոշի փչելու Եւրոպայի աչքերուն, ներշնչուած էր տիրահռչակ Գիզրայէլիէն (Անգլիոյ պահպանողական դահլիճին նախագահը):

Ոչ ոք, սակայն, չէր հաւատար «ընդհանուր ուժօրմներուն»... քանի որ շատոնց «վիժեր էին» Թանդիմաններն ու Հատար Հոմայունները:

Ռուսաստանը խօսքի փոխարէն գործ պահանջեց Թիւրքիայէն, — լուրջ ուժօրմներ յատկապէս սլավ ապստամբ ժողովուրդներու համար:

1876-ի յունուար 31-ին քրիստոնեայ պետութիւններու «համերգը» հաւաքական նոս մը առաջադրեց սուլթանին: Եւ սակայն, աններդաշնակութիւնը կը պոռար այդ հաւաքական երաժշտութիւնէն: Անգլիա, Գիզրայէլիէ կառավարութիւնը, կատաղօրէն հակառուս, վերապահոտ դիրք բռնած էր եւ դադանի կը թելադրէր սուլթանին՝ պնդելու «ընդհանուր ուժօրմներու» ծրագրին վրայ: (Նման դիրք բռնեց Լօրանովեան Ռուսաստանը 1895-96-ի 'հայկական Դրամայի ընթացքին):

Բ. Դուռը, այնուամենայնիւ, ընդունեց

հաւաքական յուշադիրը: Ապստամբները վար դրին դէնքը, թէ եւ բնաւ հաւատ չունէին սուլթանական խոստումներուն: Անոնց հական պահանջն էր՝ լուրջ երաշխիք մը պետութիւններու կողմէն:

Ռէֆօրմներու տեղ, յանկարծ պայթեցին «բուլղարական սարսափները»...

Իսկ մայիս 7-ին (1876 թ.) Պրասիոյ եւ Գերմանիոյ հիւպատոսները սպանուեցան Սելանիկում մահմետական խուժանի ձեռքով:

Ջարդն սկսուեցաւ Բուլղարիայում: Այդ երկրի վիճակը առանձնապէս ծանրացեր էր 1865-էն ի վեր, երբ հոն դաղթեցին Կովկասէն մեծաքանակ շէրքէզներ, որոնք ուսական տիրապետութիւնը 'հաստատուելէն յետոյ չուղեցին մնալ քրիստոնեայ պետութեան լուծին սակ... (Այդ շէրքէզները մեծ թուով տեղաւորուեցան նաեւ Թիւրքաց Հայաստանում եւ խոշոր դեր ունեցան հայկական ողբերգութեան մէջ):

Բուլղարական ջարդերը կատարուեցան հէնց այդ շէրքէզներու ձեռքով, որոնք Բալկաններու քրքերն էին...

Անշուշտ, ջարդերէն առաջ եղած էին յեղափոխական մանր-մունր բնկումներ բուլղար ազգարնակութեան մէջ: Ստեփան Բօթեւի եւ այլ գրողներ, մեր Ալիշանի, Բաֆֆիի ու Պատկանեանի պէս, թեւաւոր խօսքերով փողահարեր էին հայրենիքի ազատութեան դադափարը եւ վառեր էին բուլղար դադափարական երիտասարդութիւնը, որը սուսաւ բազմաթիւ դաւադիրներ ու հերոսներ: (Անոնցմէ մեծագոյնը սարկաւազ Լէվսկի, իր արձանն ունի Սօֆիայի կենտրոնական հրատարակի մը վերայ): Բազմաթիւ են նաեւ բուլղար քարտեզները, որոնց սովորաբար թիւրք կառավարութիւնը կը քչէր դէպի արեւելեան Անատոլի 'հեռաւոր անկիւնները, Գիարքէքիւր եւայլն, ուր եղբայրական յարաբերութիւններ կը հաստատուէին անոնց եւ տեղական հայերու միջեւ... (Թիւրքական հսկողութիւնը թոյլ էր եւ հայք ըստ ամենայնի կ'օգնէին հեռու հորիզոններէ բերուած իրենց քրիստոնեայ եղբայրներուն... Այս իրողութեան մասին օր մը կը վկայէր ինծի Սօֆիայի մէջ բուլղար ծերունի գործիչ մը եւ մասամբ դրանով կը բացա-